ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 հունվարի 2015 թվականի թիվ 6- Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի N 97-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1/ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՕ-192-Ն օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասը, «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի՝ «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 737-Ն որոշումը ՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2014թ. հունվարի 29-ի N 14-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 97-Ա որոշումը:

3.Որոշման կատարման ապահովումը դնել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսիստ Ս. Դավթյանի վրա:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015թ. հունվարի 23
ք.Իջևան